ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԵՋՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Եւ տեսի, եւ ահա Գառն կայր ի վերայ լերինն Սիովնի»
(Յայտն. ԺԴ. 1):

Խորհրդանշականորեն **2013** թվականին Տիրոջ հրաշափառ Հարությունը գրեթե ամբողջությամբ համընկավ բնության հարության՝ գարնան ծաղկման հետ: Հավատացյալի հոգին ու բնության աներեւույթ ոգիները միաժամանակ արթնանում ու ժամ առ ժամ փթթում էին՝ Հարության լեռը բարձրանալու համար անհրաժեշտ ուժեր կուտակելով: Եւ ահա, դեռ լեռան ստորոտից նրանց դիմավորեց ավետաբեր հրեշտակը՝ «զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ. **6**): Այո՛, այլեւս անհնար էր հարություն առած Տիրոջը մեռյալների մեջ փնտրել. քրիստոնյաների ջերմ ողջույնները՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի», անմիջապես լցնում էին մահվան ու մեղքի սարսուռով փորված խորխորատը:

Որքան էլ զարմանալի է, Հարությամբ շահած հաղթանակն Աստծո ահեղ զայրույթի եւ երկնային զորքերի պայքարի արդյունք չէր: Այն անցավ տառապանքի, խոնարհության ու նվաստացման մի անասելի շղթայով: Աստծո Գառը, իբրեւ հեզության եւ անմռունչ համբերության օրինակ, տրվեց մարդկության մեղքերի համար: Նրան խաչեցին ու զոհաբերեցին ուղղակի այն պատճառով, որ Նա անմեղ էր, որեւէ մեղք չուներ... Մարդկային տառապանքի ու զրկանքի մեջ, սակայն, Նա իմաստ էր դնում՝ իբրեւ վերջնակետ նշելով Աստծո արքայությունը, մահվան ու ոչնչացման անդեմ իրականությանը դուրս էր գալիս դեմ հանդիման՝ իր հեզությամբ, պարզությամբ եւ խոնարհությամբ շահելով անգամ անհույս մեղանչած հազարավոր հոգիների:

Հայաստանյայց Եկեղեցին տոնախմբում է Զատիկը՝ Պասեքը, մահվան գերությունից մարդու ազատագրման հիշատակությունը, երբ, Հին Օրենքի ընդունված կարգի համաձայն, զոհաբերվում է անարատ գառը եւ նրա արյունով, վերահաս մահվան վտանգից փրկվելու նպատակով, դրոշմվում են տներն ու ընտանիքները (Ելից ԺԲ. **12**): Իր դռան շեմն ու այդտեղով անցնող յուրաքանչյուրին Եկեղեցին խորհրդանշականորեն ցողում է Գառան արյամբ՝ իբրեւ նշան Հարության եւ Անմեղության: Սակայն մեր դարաշրջանում, Հայտնությամբ արձանագրված իրադարձության հիշատակությունից անդին, Եկեղեցին այսօր մեկ այլ կարեւոր առաքելություն էլ ունի՝ Հարության լույսի պրիսմակով ընդօրինակելու Աստծո լեռան գագաթին կանգնած Գառին, դառնալու Նրա պես հեզ, խոնարհ, պատրաստ ամեն տեսակ չարչարանքի ու սուտ դատաստանի: Իրոք, մեզանից յուրաքանչյուրին այս իմաստով ծանր մի առաքելություն է բաժին ընկնում. իբրեւ Գառան մարմնին անեռեւույթ կապերով հոդված անդամներ՝ փնտրելու եւ գտնելու Եկեղեցու հոգեւոր կյանքի գիտակցության խորքերում փայլփլող հայելին, որի մեջ անդրադարձվում է ոչ թե մեր, այլ զոհաբերված Գառան պատկերը: Դժվար է այսօր հեզ ու խոնարհ Թագավորի նման անխոս ու անտրտունջ գնալ դեպի մահվան եւ հարության սահմանաբաժանը. միշտ կան ու կգտնվեն պատճառներ, ազգային-հասարակական շահեր, գիտական-փիլիսոփայական հիմնավորումներ: Մինչդեռ Եկեղեցուն Սիոն լեռան վրա սպասում է հարություն առած Աստծո Գառը: Այնտեղ՝ Սիոնի երկնամուխ կատարին, հավաքվում են բոլոր նրանք, որ «ունէին զանուն Նորա եւ Հօր գրեալ ի վերայ ճակատաց նոցա» (Յայտն. ԺԴ. **2**): Այնտեղ է Եկեղեցին տեսնում յուրաքանչյուր հավատացյալ մարդու փրկությունը: Այնտեղ է տանում եւ տանելու Գառան օրինակով ինքնազոհաբերման ու ինքնաողջակիզման պատրաստ Եկեղեցու գաղտնի ճամփան...

ԻԱ. դարը շատ հաճախ բնութագրվում է **crisis**-ի՝ ճգնաժամի կամ ճգնաժամերի ժամանակաշրջան, երբ առկա են միջազգային, միջավայրային, միջկրոնական, միջմշակութային ու հոգեւոր խոր խնդիրներ, որոնք մարդկությանը կանգնեցնում են **crisis**-ի՝ դատաստանի, քննության առաջ: Միգուցե պատահական չէ՞, որ հունարեն «քննություն, դատաստան» նախնական իմաստ ունեցող **crisis** բառը հայերս թարգմանել ենք «ճգնաժամ»-ով: Կամեցել ենք դրա մեջ քննելու եւ չարն ու բարին զանազանելու ճի՞գը տեսնել: Հնարավոր է: Եւ քանի դեռ Աստծո Գառը հեզությամբ ու անսպառ համբերությամբ սպասում է մեզ Սիոն լեռան վրա, Եկեղեցին ճգնաժամի ու **crisis**-ի սահմանագծում պետք է ունենա ինքնազոհաբերման ու ողջակիզվելու գիտակցությունը: Ծանր է գայլերի ոհմակի դեմ գառան հեզությամբ քայլել, բայց առավել ծանր է մյուս գառներին գայլ դառնալու գայթակղությունից ետ պահելը...